

պերտի խառնուրդ հիւսուածք մը ունին, որոնց կեղծերը ասկէ քանի մը տասնեակ տարիներ առաջ կը շինուէին Հէրէքէի արքունի աշխատանոցին մէջ:

ԳՈՐԳ

Բառը առաջին անգամ Յով. Պլուզ Երզնկացին է որ կը գործածէ իր Համբաւաւոր Քերականի Մեկնութեան մէջ ԺԳ դարու վերջը, սապէս. «փաղանուն ասի, կապերտ եւ գորգ»: Գործածուած նաեւ Ստեփանոս Սիւնեցիէ իր Քերականին մէջ:

Բառին ծագումը չէ մեկնուած: Կան որ գործ բառէն ծագած կը սեպեն: Հայկապեան կ'ըսէ. «Գորգ, Գ. որպէս ուամկ. քուրջ, այն է կապերտ, եւ որպէս ուամկ. կարպետ, խալի»:

Յով. Պլուզի պէս իմ ձեռագրաց հաւաքածոյիս բոլոր հին բառարանները, որպէս 1387ինը եւ միւսները գորգին զիմաց կապերտ կը նշանակեն: Բառին աւելի հին գործածութիւնը մեր մատենագրութեան մէջ ծանօթ չէ ինծի: Սակայն ատիկա պատճառ մը չէ որ անոր գոյութիւնը ուամկօրէնի մէջ ԺԳ դարէն ալ հին չըլլայ:

ՕԹՈՑ

Իբր գորգ առաջին անգամ Թովմայ Արծրունիի մօտ գործածուած կը գտնեմ բառը. «Աչոտ զհիւանդութիւնն կեղծաւորեալ ի տեղւոջ օթոցին անկեալ դնէր»⁽³⁰⁾:

Գէորգ դպիր Պալատցի իր Պարսկահայ բառարանին մէջ «խալի-դալի» բառին դէմ կը նշանակէ օթոց, գորգ:

ԽԱԼԻ (- ԳԱԼԻ)

Գուցէ այս բառը հայերէն գորգի հոմանիշներուն մէջ դասելու իրաւունք չունինք, սակայն մեր ուամկօրէն մատենագրութիւնը դայն գործածած ըլլալով յաճախ, հոս աւելորդ չեմ նկատեր անոր մասին խօսիլ:

Ինծի ծանօթ հնագոյն գործածութիւնը խալիչայ ձեւովն է⁽³¹⁾ ԺԳ դարէն (Պղնձէ Քաղաք), որ պարզապէս խալի բառն է նուազական չէ կամ չայոյ: Բառը կը գտնենք գործածուած խալու ձեւով 1574էն

⁽³⁰⁾ Պատ. - Թիֆլիս, 1917, էջ 341:

⁽³¹⁾ Շահ Օթման ի Ամիր Մկրտիչ Նազաչը «ի վերայ Թաղաւորական խալի-չային նստուցանէր»: (Հայագատում փոքր, Վենետիկ, 1901, Գ. հատոր էջ 223):